

**ՔԵՄԱԼԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԶԱՆԳՎԱԾՍՅԻՆ ԿՈՏՈՐԱՍՆԵՐՆ  
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌՈՒՄ (1920-1921 թթ.)**

*Բանայի բառեր – Շիրակի նահանգ, Ալեքսանդրապոլ, Փամբակ, Կարս, Հայոց ցեղասպանություն, կոտորած, ողջակիզում, քեմալականներ, ականատես, վերապրող, վկայություններ, հիշողություններ, դիմադրություն*

1920 թ. քեմալական արշավանքն աղետաբեր հետևանքներ է թողել Ալեքսանդրապոլի գավառում (Շիրակի նահանգ):

Սույն հոդվածում ներկայացվում են այդ գավառի հատվածներից մեկում (հիմնականում Առաջին գավառամասում) քեմալականների 1920-1921 թթ. ցեղասպան քաղաքականության փաստերը: Օգտագործվել են ազգագրական և բանահավաքչական դաշտային աշխատանքների, արխիվային ու ժամանակի մամուլի նյութեր, ինչպես նաև մասնագիտական գրականության մեջ օգտագործված տեղեկություններ: Ուսումնասիրվել են թեմային առնչվող Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ֆոնդերում պահվող ականատես-վերապրածների հուշագրությունները, վերջիններիս ժառանգների շնորհիվ մեզ հասած հիշողությունները, որոնք պահվում են տողերիս հեղինակի անձնական արխիվում:

**Դիմադրություն, ինքնապաշտպանություն**

Հայ ժողովրդին ուղղված ՀՀ կառավարության՝ 1920 թ. նոյեմբերի 5-ի կոլլեկտիվ կոչով հաղորդագրության մեջ հիշատակվում էին Սարդարապատի ու Ղարաքիլիսայի հերոսամարտերը: Մասնավորապես նշվում էր, որ Կարսի անկումից հետո թշնամին կանգ չի առել, և «տաճիկ զորամասերը» շտապում են առաջ: Կարսի շրջանի հայության մեծ մասը տեղահան է եղել, մինչև Արփաչայ (Ախուրյան) գետը հայկական գյուղերը դատարկվել են, կրկին տիրում են ավեր, սով, թշվառություն, ինչպես նաև կոտորածներ են տեղի ունենում<sup>1</sup>: Վիճակն օրհասական էր, թշնամին գրավում է Ալեքսանդրապոլը (այժմ Գյումրի) և շարժվում Ղարաքիլիսայի (այժմ Վանաձոր) ուղղությամբ:

1920 թ. թուրք-հայկական պատերազմի ընթացքում, չնայած առանձին դեպքերում հայկական զորամասերի նահանջին, Ալեքսանդրապոլի գավառում տեղի են ունեցել ինքնապաշտպանական մարտեր<sup>2</sup>: Առանձին գյուղե-

<sup>1</sup> Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 80:

<sup>2</sup> Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ (այսուհետև՝ ՀՅԹԻ), թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆ. հ. 385: Հովակիմ Կարապետյանի (ծնվ. 1905 թ., Չրախլի) հուշերը: (Հուշագրության մեջ ժամանակագրությունը որոշակի խախտված է:)

րում օգտագործվել են մեկ կամ երկու հրացան, դանակներ, դաշույններ, աշխատանքային գործիքներ՝ եղաններ, բահեր... շատերը միացել են կռվող զորաջոկատներին<sup>1</sup>: Իհարկե անհավասար ուժերի և սպառազինության բացակայության պայմաններում ինքնապաշտպանությունը հայ բնակչության համար չէր կարող դրական ելք ունենալ, բայց երբեմն դա ապահովել է բնակավայրերից հեռացողների թիկունքը, որոնք մազապուրծ հասել են հիմնականում Ղարաքիլիսայի գավառ և հարակից վայրեր:

Ջորքերի հրամանատարի շտաբի՝ 1920 թ. նոյեմբերի 17-ի ամփոփագրից տեղեկանում ենք, որ Ջաջուռի ջոկատը մարտերի է բռնվել թշնամու դեմ, և նոյեմբերի 14-ի և 15-ի կռիվներում թուրքերը կրել են մեծ կորուստներ՝ վիրավորներ և սպանվածներ, որոնց խուճապահար նահանջելիս չեն հասցրել հետները տանել<sup>2</sup>:

Հարկ է նշել, որ Սեպուհը զինադադարի նախօրյակին հանկարծակի հարձակվում է Ջաջուռի բարձունքներում գտնվող «տաճկաց առաջավոր զորամասերի» վրա և պարտվում: Սակայն այս հարձակումն իրարանցում է առաջացնում Կարաբեքիր փաշայի ճամբարում<sup>3</sup>:

Ըստ Փոքր Քափանակ (այժմ Հովիտ Շիրակի մարզում) գյուղից Կարապետ Փիլոյանի (ծնվ. 1896 թ. Կարսում) վկայության՝ թուրքերի դեմ Մեծ Քափանակ (այժմ Բասեն Շիրակի մարզում) գյուղի մոտակայքում (ներկայիս՝ Կառնուտի ջրամբարի բլրակի մոտ) ինքնապաշտպանական մարտեր է իրականացրել «արցախյան ջոկատը», որին միացել են տեղացիներից ոմանք: Թշնամու զորաջոկատը նահանջել է, հետո համալրվելով՝ վերադարձել: Հակառակորդի ճնշման ներքո «արցախյան ջոկատը» նահանջել է<sup>4</sup>: Այդ գործողությունների մասին թե՛ Շիրակի դաշտում, թե՛ Փամբակի հովտում վկայել են վերապրողները: Ըստ ականատես Սիմոն Խաչատրյանի (ծնվ. 1885 թ., Ղալթախչի) վկայության՝ թուրքական բանակը չի կարողացել անցնել Ջաջուռի լեռնանցքը, քանի որ 20-25 արցախցի հերոսներ նահատակության գնով մեկ շաբաթ պաշտպանել են դիրքը: Նրանք շրջակա գյուղերի բնակիչներին առաջարկել էին ստեղծել տեղական ինքնապաշտպանություն, սակայն հիմնականում մերժում են ստացել: Թուրքերի՝ լեռնային հրանոթների գնդակոծման տակ հայտնված ջոկատի տղաները զոհվել են: Ականատեսն այդ ժամանակ եղել է գործող բանակում<sup>5</sup>: Ջաջուռի լեռնանցքում տեղի

---

<sup>1</sup> Բանասաց՝ Հասմիկ Խաչատուրի Մուրոյան (ծնվ. 1936 թ., Թիֆլիս), որն ապրում էր Շիրակի մարզի Բասեն գյուղում, պատմությունը լսել է հորից՝ դեպքերի ժամանակակից, ականատես-վերապրած Խաչատուր Միքայելի Հարոյանից (ծնվ. 1874 թ., Մեծ Քափանակ):

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 321:

<sup>3</sup> Նույն տեղում, ֆ. 477, ց. 1, գ. 15, թ. 4, 5, 6:

<sup>4</sup> Բանասաց՝ Վանիկ Ոսկանյան (ծնվ. 1965 թ., Հովիտ), ականատեսի թոռը, պատմությունը լսել է պապից:

<sup>5</sup> Բանասաց՝ Գարիկ Կոստանյան (ծնվ. 1958 թ., Հարթագյուղ), ականատեսի թոռը, պատմությունը լսել է հորից՝ Հովհաննես Սիմոնի Կոստանյանից (ծնվ. 1924 թ.):

ունեցած մարտական գործողությունների մասին վկայում է նաև Հայկանուշ Խանգադյանը (ծնվ. 1909 թ., Աղբուլաղ)՝ նշելով, որ մարտերն ընթանում էին Գյաղուկում (Ջաջուռի լեռնանցքի ժողովրդի խոսակցական ձևը)<sup>1</sup>:

Հարկ է նաև նշել «աղ ու հացով» թուրքերին դիմավորելու փաստերի մասին Ալեքսանդրապոլի գավառում և Փամբակի տարածքում (Ղարաքիլիսայի գավառ), որը, կարծում ենք, անպաշտպան ժողովրդի խաղաղասիրական քայլ էր, ինչ-որ տեղ «ինքնապահպանության» դրսևորում: Բացի այդ, այս երևույթը նաև հայ բոլշևիկների ակտիվ քարոզչության հետևանքն էր: Բաքվում գտնվող ՀԿ(բ)Կ Կենտկոմի անդամների ստորագրությամբ տրվել էր «հույժ գաղտնի» հրահանգ՝ թիկունքում և ռազմական գոտիներում հնարավորության դեպքում նաև թռուցիկների միջոցով ծավալել լայն քարոզչություն: Նշվում էր, որ «Թուրքիան այլևս նախկին Թուրքիան չէ և Հայաստանի նկատմամբ ագրեսիվ նպատակներ չունի», «Քեմալական Թուրքիան Ռուսաստանի դաշնակիցն է, և պայքարում է իր ազգային ազատության համար» և այլն<sup>2</sup>:

Ըստ ականատեսների վկայությունների, որոնց՝ սերունդներին փոխանցված հիշողությունները պահպանվել են մինչ օրս՝ դառնալով ընտանեկան հիշողության տարրեր, թուրքերին աղ ու հացով են դիմավորել Դուզքյանդի (այժմ Ախուրյան Շիրակի մարզում), Դիրաքլարի (այժմ Կառնուտ Շիրակի մարզում), Թափադուլակի (այժմ Արևիկ Շիրակի մարզում) բնակիչները՝ խոստանալով ընդունել թուրքական իշխանությունը<sup>3</sup>: Թափադուլակ գյուղում թուրքերը զանգվածային կոտորածների չեն դիմել: Տեր Աբրահամը գյուղի երկու երևելիների հետ աղ ու հացով ընդառաջ է եկել թուրք հրամանատարին՝ հայտնելով հնազանդության մասին: Չնայած դրան՝ գյուղից գերեվարվել են հարյուրավոր երիտասարդներ, որոնց, ողջ մնացածների և փախուստով ազատվածների հավաստմամբ, աշխատեցրել են և կոտորել<sup>4</sup>:

1920 թ. նոյեմբերի 27-ին Ալեքսանդրապոլի գավառի առաջին գավառամասի կոմիսարի օգնականի՝ գավառային կոմիսարին ուղղած զեկույցից տեղեկանում ենք, որ Դուզքյանդ գյուղը լցված է եղել «տաճկական զորքերով», և ժողովուրդը նրանց է հանձնել մարագների բանալիները, որպեսզի բռնություններ չլինեն<sup>5</sup>: Թուրքերը այս գյուղում կատարում են թալան ու կողպուտ: Տղամարդկանց ցուցակագրում են, երիտասարդները փախչում են

<sup>1</sup> ՀՅԹԻ, թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆ. հ. 38:

<sup>2</sup> Տե՛ս **Սարգսյան Կ.**, Համաշխարհային հեղափոխության արևելյան խաչմերուկում // «Գարուն», 1990, թիվ 4, էջ 20:

<sup>3</sup> Բանասաց Հասմիկ Խաչատուրի Մուքոյան (ծնվ. 1936 թ., Թիֆլիս), պատմությունը լսել է հորից՝ դեպքերի ժամանակակից՝ Խաչատուր Միքայելի Հարոյանից (ծնվ. 1874 թ., Մեծ Քահանակ):

<sup>4</sup> Տե՛ս **Մկրտչյան Լ.**, Արևիկ համայնքի պատմությունը. դրվագներ // <http://armenianchurchco.com/5148.html>, դիտվել է 13.06.2021:

<sup>5</sup> Տե՛ս **Ալեքսանյան Կ.**, Ալեքսանդրապոլի գավառը թուրքական ռազմակալման ժամանակաշրջանում // «ԲՀԱ», 2009, թիվ 2, էջ 127:

լեռները: Հայ գյուղացիությունը գտնվում է կոտորածի վտանգի առջև, փախած բնակիչները սարսափով են պատմում թուրքերի արարքների մասին<sup>1</sup>:

Թուրքերին Ղուզբյանդ և Դիրաքլար գյուղերում նույնպես դիմավորել են աղ ու հացով, դիու-գուռնայով՝ նրանց սիրաշահելու համար<sup>2</sup>: Հարկ է նշել, որ նմանօրինակ դեպք եղել էր Արդահանում 1918 թ. ձմռանը, երբ երեսունի չափ սահնակներով Արդանուչի և Շավշետի փախստականներին փոխադրել էին Ախալքալաք: Այնտեղից շուրջ յոթանասուն սահնակներ կրկին եկել էին՝ մնացածներին ևս փոխադրելու, բայց դա այլևս հնարավոր չի եղել, քանզի քաղաքն ամեն կողմից շրջապատված էր թշնամու գորքով: Քաղաքում մնացած ղեկավար մարմինները երկար խորհրդակցություններից հետո հարկադրում են բնակիչներին թուրքերին դիմավորել աղ ու հացով և դիու-գուռնայով: Այդպես էլ արվում է, սակայն տասը օր անց սկսվում է կոտորածը թուրքերի և քրդերի կողմից<sup>3</sup>:

Մեծ Քափանակ գյուղում հնարավոր միջոցներով կազմակերպվում է ինքնապաշտպանություն: Մարտերին մասնակից Խաչատուր Հարոյանի ընտանիքի անդամները (կանայք և երեխաներ) գյուղի բնակչության մի մասի հետ փախչում են Չրախլի: Թուրքերը նրանց հետապնդում են, շրջապատում, լցնում Ղուզդունի ձորը<sup>4</sup> և դաժանաբար կոտորում՝ չինայելով նույնիսկ երեխաներին: Ողջ մնացածներն ահասարսուռ պատմություններ են պատմում այդ միջադեպի մասին: Չկարողանալով շարունակել դիմադրությունը՝ տղամարդիկ նահանջում են, իսկ թուրքերը, մտնելով գյուղ, մարդկանց բռնի լցնում են մարագները, այրում ու կոտորում<sup>5</sup>: Մինչդեռ Փամբակի որոշ գյուղերում նախքան կոտորելը խաղաղ բնակչության նկատմամբ օգտագործվել են տարբեր հնարքներ. հայտարարել են նպաստ բաժանելու մասին, ցուցակագրելու, փաշայի մասնակցությամբ ժողով կազմակերպելու և այլնի պատրվակներով հավաքել են մի տեղ ու ոչնչացրել<sup>6</sup>:

Եթե ուշադրություն դարձնենք գյուղերում կոտորածի ենթարկվածների քանակին, ապա կնկատենք, որ Դիրաքլարում, որտեղ թուրքերին աղ ու հացով են ընդառաջել, սպանվածների թիվը համեմատաբար փոքր է (300 մարդ)<sup>7</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս «Տաճիկների արարքը» // «Ժողովուրդ», 1920, թիվ 186, էջ 2:

<sup>2</sup> Բանասաց՝ Հասմիկ Խաչատուրի Մուքոյան:

<sup>3</sup> Տե՛ս **Ստամբուլցյան Խ.**, Մաթիկի մայրիկը, իրական պատմություն գուլումի աշխարհից (գրի առնված 1925 թ.), Երևան, 2010, էջ 8-14:

<sup>4</sup> Ղուզդունի ձորը գտնվում է Չրախլի (Ջրառատ, Շիրակի մարզ) և Խանվալի (1946 թ. Ծաղկասար: 1960-ական թվականներից ապարնակեցվել է, ավերակները գտնվում են Ջրառատից հինգ կմ դեպի հյուսիս-արևելք) գյուղերի միջև:

<sup>5</sup> Բանասաց՝ Հասմիկ Խաչատուրի Մուքոյան:

<sup>6</sup> Տե՛ս ՆՅԹԻ, թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆ. հ. 38, ֆ. հ. 42: Տե՛ս նաև «Ղալթախչի գիւղի կոտորածների մանրամասնությունները» // «Յառաջ», 1920, թիվ 254, էջ 4:

<sup>7</sup> Տե՛ս **Հակոբյան Թ.**, Հայացք Արարատից, հայերը և թուրքերը՝ պատերազմ, սառը պատերազմ, դիվանագիտություն, Երևան, 2012, էջ 117:

Չնայած թուրքերին աղ ու հացով դիմավորած գյուղերում մերթ տեսնում ենք թուրքական «զսպվածություն», մերթ դաժանություններ ու վայրագություններ, ինչպես օրինակ՝ Փամբակի հովտի երեք՝ Ղալթախչի (այժմ՝ Հարթագյուղ Լոռու մարզում), Ղարաբոյա (այժմ՝ Խնկոյան Լոռու մարզում), Աղբուլաղ (այժմ՝ Լուսաղբյուր Լոռու մարզում) գյուղերում<sup>1</sup>, այդուհանդերձ զանգվածային կոտորածների պատկերն այդ վայրերում առավել սարսափելի էր: Տեղի բնակչության հետ սրի են քաշել նաև 7.500 փախստականների Կարսի և Ալեքսանդրապոլի շրջաններից, որոնք Ալեքսանդրապոլի անկումից հետո պատսպարվել էին Փամբակի՝ վերը նշված երեք գյուղերում<sup>2</sup>:

Այս ամենի պատճառը միանշանակ չէ, սակայն փաստ է, որ դիմադրություն ցուցաբերածների նկատմամբ ավելի դաժան են վարվել: Այսպես, օրինակ՝ Ուրֆայի 1915 թ. սեպտեմբերից հոկտեմբեր 25-օրյա հերոսամարտից հետո, երբ հայերն անկարող եղան դիմակայել, թուրքական զորքերը մտան քաղաքի հայկական թաղամասեր և թաքստոցներում ապաստանած հայերի մեծ մասին՝ հիմնականում ծերերի ու երեխաների, սրի քաշեցին<sup>3</sup>:

### Ողջակիզում

Քեմալականների իրականացրած կոտորածների ժամանակ տեղի են ունեցել նաև զանգվածային ողջակիզումներ: Ասկյարները նախապես համախմբած մարդկանց, հիմնականում՝ կանանց, երեխաների և ծերերի տեղափոխել են գյուղերի տարրդունակ մարագներ և կենդանի այրել: Մեծ Քափանակ գյուղում բնակիչներին այրել են Թաղևոսյանների<sup>4</sup>, Փոքր Քափանակում՝ Մելիքյանների ու Պետրոսյանների մարագներում<sup>5</sup>: Փոքր Քափանակում և Չոռլիում (այժմ Լեռնագյուղ, Շիրակի մարզ) սպանվածների թիվը յուրաքանչյուրում հասնում էր 1000-ի<sup>6</sup>:

Թուրքական հարձակման ժամանակ Մեծ Քափանակ գյուղում սկսվում է իրարանցում: Փախչող ժողովրդին թուրքական զորքը շրջապատում է, ետ դարձնում Չրախլի գնացող ճանապարհից ու Գյալանդայայի (Հարսնասար, լեռնագագաթ Փամբակի լեռնաշղթայի արևմտյան մասում, Ջրառատ գյուղից 3,5 կմ հյուսիս-արևելք) ու Արթափայի (լեռնաբլուր Շիրակի սարահարթի արևելյան մասում՝ Բասեն գյուղի մոտ) լանջերից և լցնում Թաղևոսյանների

---

<sup>1</sup> Տե՛ս «Ղալթախչի գիւղի կոտորածների մանրամասնությունները», էջ 4, **Ներսիսյան Մ.**, Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, Երևան, 2005, էջ 129: Տե՛ս նաև «Հայկանուշ Խանգաղյանի վկայությունը» ՀՅԹԻ, թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆ. հ. 38:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 124, թ. 6:

<sup>3</sup> Տե՛ս Մաքառելով կյանքի ու արժանապատվության համար. ինքնապաշտպանական մարտերը մեծ եղեռնի տարիներին // ՀՅԹԻ, «Որոսպէկտուս», Երևան, 2015, էջ 52:

<sup>4</sup> Բանասաց՝ Հասմիկ Խաչատուրի Մուրոյան:

<sup>5</sup> Բանասաց՝ Շահեն Մելիքյան (ծնվ. 1938 թ., Փոքր Քափանակ), գյուղում պահպանված կոլեկտիվ հիշողություն:

<sup>6</sup> **Հակոբյան Թ.**, նշվ. աշխ., էջ 117:

մեծ մարագը, որը 12 աստիճան ներքև իջնող մեծ շինություն է եղել: Մարդկանց լցնելով մարագը՝ փաշայի հրամանով դրա շուրջը կարգվում են սակյարներից բաղկացած զինված պահակներ, որոնք հսկողություն են սահմանում և անընդհատ հավելում այնտեղ գտնվողների քանակը: Մարագի երդիկին ու չորս կողմը նավթ են լցնում և այրում, վատվող գերաններն ընկնում են մարդկանց վրա<sup>1</sup>: Մարագում հիմնականում եղել են կանայք, երեխաներ և ծերեր:

Այս դաժան ոճրագործության մասին պատմում է նաև հուշագիր Ղահրաման Զատիկի Սուրբիայանը (ծնվ. 1889 թ., Կարսի մարզ, Արագին): 1920 թ. Մեծ Քափանակ գյուղում թուրքերն անասնակերի մարագներում հավաքած մարդկանց կենդանի-կենդանի այրում են՝ շուրջբոլորը մագութ ու նավթ լցնելով<sup>2</sup>: Հատուկ հանձնաժողովի թվերը սարսափազոտ են: Այդտեղ սպանվել է շուրջ 1500 մարդ, որոնց դիակները ցրված էին խրճիթներում, գոմերում, մարագներում և հորերում<sup>3</sup>: Այսպես են վարվում նաև հարևան Չրախլի գյուղում: Թուրք բարբարոսները 1920 թ. Շիրակի դաշտի բնակչության մի մասին և գյուղի բնակիչներին լցրել են Համբարենց տուն կոչվող շինության մեջ և կենդանի այրել<sup>4</sup>: Ձորքերի հրամանատարի շտաբի նոյեմբերի 17-ի ամփոփագրից Բաշ-Ապարանի ջոկատը հաղորդում է, որ թուրքերը գրավել և կրակի են մատնել Խինվալի գյուղը, բնակիչներին դուրս են քշել դեպի Չրախլի գյուղ և այրել մարագներում<sup>5</sup>: Ըստ վերապրած Յուլակ Թորոյանի վկայության՝ 1920 թ. թուրքական զորքի հարձակման ժամանակ Չրախլի գյուղի բնակիչները, թողնելով ամբողջ ունեցվածքը, փախչում են: Թուրքերը ժողովրդին հրմշտում, ծեծում ու ջարդում են, այնուհետև լցնում մի տան մեջ և կենդանի այրում<sup>6</sup>:

Մուտք գործելով Հաջի Նազար (այժմ Կամո Շիրակի մարզում) թուրքերը բնակիչների նկատմամբ դաժան ու անմարդկային վերաբերմունք են դրսևորում: Հրամանատարը նրանց «մշու աղամներ» է անվանում<sup>7</sup>: Հայտնի է, որ թուրքերի ատելությունն առանձնակի էր Ալեքսանդրապոլում գտնվող գաղթականների նկատմամբ, որոնց արհամարհաբար «մշեցի աղամ» («մշեցի մարդ») էին անվանում: Գաղթականներին աշխատեցնելու պատրվակով տանում, ծե-

---

<sup>1</sup> Բանասաց՝ Հասմիկ Խաչատուրի Սուրբյան: Պատմությունը լսել է հորից՝ վերապրող Խաչատուր Հարոյանից (ծնվ. 1874 թ., Մեծ Քափանակ):

<sup>2</sup> Տե՛ս ԶՅԹԻ, թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆ. հ. 103:

<sup>3</sup> **Հակոբյան Թ.**, նշվ. աշխ., էջ 117:

<sup>4</sup> Տե՛ս **Մխչյան Ա.**, Ջրառատում բացվեց նահատակների հիշատակը հավերժացնող խաչքար // <https://armenpress.am/arm/news/802970/arm/>, դիտվել է 13.06.2021:

<sup>5</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 321: Նաև՝ «Սպարապետի շտաբի ռազմական հաղորդագրություն» // «Ռազմիկ», 1920, թիվ 29, էջ 16:

<sup>6</sup> Տե՛ս ԶՅԹԻ, թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆ. հ. 25:

<sup>7</sup> Բանասաց՝ Անդրանիկ Ենոքի Շահինյան (ծնվ. 1939 թ., Կամո), գյուղում պահպանված կոլեկտիվ հիշողություն: Գյուղի բնակչության նախնիների մի մասը այստեղ են հաստատվել Մուշից XVIII դարի 70-ական թթ.:

ծում և խոշտանգում էին<sup>1</sup>: Հաջի Նազար գյուղում կանանց ու աղջիկներին առանձնացրել են այլ վայրում, երեխաներին՝ այլ, շատերին սպանել են: Հիմնականում լցրել են «Բորկի մեծահարուստների» մարագները ու դաժանորեն սպանել<sup>2</sup>: Մարդկանց մեծ մասին լցրել են «Միջո տներ», դռները փակել, չորսբուլբուլ դարման ու նավթ լցրել, որ վառեն: Գյուղից Բորկի Բետոն, որն ամուսնացած էր փաշայի հետ, խնդրում է նրան, որ չվառեն: Ամուսինը անսալով խնայում է ժողովրդին, այսպես կանխվում է ողջակիզման փորձը: Նախքան այդ ժողովրդի մի մասին տանում են Հզազի ձորը (Ջարդի ձոր) ու դաժանաբար կոտորում<sup>3</sup>: Հատուկ հանձնաժողովի տվյալներով՝ շուրջ 1500 մարդ է սպանվել Հաջի Նազար-Ղուլի գյուղում, որից 500-ի դիակը մոտակա ձորում էր<sup>4</sup>:

Եկեղեցիները պղծվում էին, սրբությունները ոտնատակ տրվում: Մեծ Քափանակում եկեղեցին օգտագործվում է իբրև սպանդի վայր: Իրարանցման մեջ հայտնված ժողովրդի մի մասին հալածելով տանում են գյուղի եկեղեցին, այրում են՝ այն քանդելով մարդկանց վրա<sup>5</sup>:

### **Ջարդի ձոր**

Քեմալականների իրականացրած զանգվածային կոտորածների առավել հայտնի վայրը Հզազի ձորն է, որը զանգվածային կոտորածներից հետո ստացել է Ջարդի ձոր անվանումը: Այն գտնվում է Ջաջուռի լեռնանցքում՝ Լուսաղբյուր (Լոռու մարզում) և Ջաջուռ (Շիրակի մարզում) գյուղերի միջև: Ջաջուռի լեռնանցքը (թամբոց) Շիրակի դաշտը կապում է Փամբակի գոգավորությանը: Ձորի լանջերը զառիվեր են, դժվարամատչելի: Թուրքերը 1952 մ բարձրության վրա գտնվող այս ձորում զանգվածաբար կոտորել են Շիրակի և Փամբակի բնակչության մի մասին: Այն Ալեքսանդրապոլի և Ղարաքիլիսայի գավառների սահմանագլխին էր: Թուրքական զորքը գյուղերից բռնի, ինչպես նաև տարբեր խարդավանքներով տեղահանել և այստեղ է բերել բռնագավթված տարածաշրջանների բնակիչներին ու զանգվածաբար կոտորել:

1975 թ. անտառտնտեսության բրիգադիրը աշխատանքների ժամանակ հայտնաբերել է կանանց դիակներ, որոնց զանգերին դեռևս մնացած են եղել երկար մազեր: Այդ լանջին դադարեցվում են ծառատնկման աշխատանքները<sup>6</sup>:

Հայերի կոտորածը Ջաջուռի շրջանում ներկայացնում է նաև Ղարաքիլի-

---

<sup>1</sup> Տե՛ս **Ալեքսանյան Կ.**, Թուրքիայի ցեղասպանության քաղաքականության շարունակությունն Ալեքսանդրապոլի գավառում // «ԲՀԱ», 2005, թիվ 1, էջ 22:

<sup>2</sup> Բանասաց Անդրանիկ Շահինյան, գյուղում պահպանված կոլեկտիվ հիշողություն:

<sup>3</sup> Բանասաց Արսիկ Հարութի Մանուկյան (ծնվ. 1931 թ., Հաջի Նազար), գյուղում պահպանված կոլեկտիվ հիշողություն:

<sup>4</sup> **Հակոբյան Թ.**, նշվ. աշխ., էջ 117:

<sup>5</sup> Բանասաց Անիշկա Բեյբության (ծնվ. 1938 թ., Մուսալեյան), պատմությունը լսել է ականատես պապից՝ Համո Հարությունյանից (ծնվ. 1878 թ., Մեծ Քափանակ):

<sup>6</sup> Բանասաց-ականատես Անիշկա Բեյբության:

սայի ամերիկյան կոմիտեի ներկայացուցիչ Չարլզ Ֆ. Գրանտը, որը, լսելով թուրքերի կողմից Ադրուլադի շրջանում սպանված հայերի մեծ քանակությամբ դիակների մասին, Ամերիկյան կոմիտեի անդամներ Ռեյ Լ. Օգդենի և Ջորջ Ա. Բեյ-Մամիկոնյանի ուղեկցությամբ 1921 թ. ապրիլի 28-ին մեկնում է այնտեղ: Հասնելով Ադրուլադ, այնուհետև Ջաջուտի լեռնաշղթա՝ համանուն ձորի մուտքի մոտ հարյուր ոտնաչափ հեռավորության վրա նրանք հանդիպում են զգալի թվով՝ մեծ մասամբ երեխաների դիերի: Ջոհերի թիվը տատանվել է մոտավորապես 1200-1500-ի միջև, որոնք հիմնականում սպանվել են սվիններով կամ որևէ այլ սառը զենքով, ինչը հաստատվել է վերքերի զննությամբ, օրինակ՝ կտրված կրծքեր, հղի կանանց պատռված որովայններ և այլն: Հայտնաբերվել են շուրջ 200 պարկուճներ՝ թուրքական գրերով և կիսալուսնի ու աստղի նշաններով: Ջոհերը գնդակահարվել են շատ մոտ տարածությունից՝ կանգնեցրած լինելով գառիթափի ամենածայրին<sup>1</sup>:

Ալեքսանդրապոլից դեպի Ղարաքիլիսայի կայարանի ուղղությամբ թունելից (երկաթգծի Ջաջուտի թունել) վերև գտնվող ձորի սարսափելի կտորածի մասին պատմում է նաև կապի աշխատակից Կոստանոշվիլին՝ նշելով, որ հոսող առվակում գտնվել են շատ մարմիններ և ձորը լցված է եղել բացառապես կանանց ու երեխաների դիակներով<sup>2</sup>: Կենդանի մնացած գյուղացիները հասցրել էին թաղել մեծ թվով դիակներ<sup>3</sup>, այդ իսկ պատճառով զոհերի թիվը հնարավոր չէ ճշտել: Երկու գավառներից այստեղ բերված ժողովուրդը, որոնց մեջ մեծ թիվ էին կազմում Կարսի նահանգի գաղթականները, ենթարկվել են կոտորածի՝ զրկված ինքնապաշտպանության որևէ միջոցից: Ադրուլադից այստեղ բերված ժողովրդին մոլորեցրել են՝ ասելով, թե իբր տանում են Գյումրի՝ հաշվառելու: Մարդկանց հավաքելուց և ճանապարհ զցելուց հետո դիմել են բռնությունների<sup>4</sup>:

Կիմ Բակշին իր ճամփորդական էսսեներից մեկում գրում է. «Մինասի ծննդավայրից՝ Ջաջուտից, ոչ հեռու կիրճում թուրքերը մորթել են մի քանի հազար ծեր մարդկանց, կանանց ու երեխաների: Նրա ծնողները հրաշքով են փրկվել...»<sup>5</sup>

Ջարդի ձորում սպանված արական սեռի ներկայացուցիչներից ամենատարիքավորը հազիվ 14 տարեկան է եղել<sup>6</sup>: Սպանված տղամարդիկ և՛ Շիրակի դաշտում, և՛ Փամբակի հովտում փոքրաթիվ են, որը պարզորոշ վկայում է, որ կանայք, երեխաները և ծերերը եղել են անպաշտպան: Այդ փաստը

<sup>1</sup> ՀԱՍ, ֆ. 114, ց. 1, գ. 134:

<sup>2</sup> Նույն տեղում, ց. 2, գ. 169, թ. 13:

<sup>3</sup> Նույն տեղում, ց. 1, գ. 134:

<sup>4</sup> Բանասաց՝ Հռիփսիկ Հարությունյան (ծնվ. 1926 թ. Ադրուլադ), պատմությունը լսել է հորից՝ ականատես Մարիբեկ Հարությունյանից (ծնվ. 1875 թ., Ադրուլադ):

<sup>5</sup> Տե՛ս Կիմ Բակշի, Ճակատագիր և քար: Էսսեներ, Երևան, 1985, էջ 357:

<sup>6</sup> ՀԱՍ, ֆ. 114, ց. 1, գ. 134:

բացատրվում է առաջին հերթին այն իրողությամբ, որ շատերը գորակոչված էին հայկական բանակ, մի մասը դարձել էր թուրքերի և հայ բոլշևիկների քարոզչության գոհ, մյուսները գերեվարվել էին: Այսպես, հայտնի է, որ նախքան թուրքերի՝ Փամբակի Ղալթախչի գյուղ մուտք գործելը եկել է մի զինվորական (հայտնի չէ հայ, թե թուրք) և հայտարարել, որ թուրքերն արշավում են դեպի Ղարաքիլիսա, եթե տղամարդիկ գյուղից դուրս գան, իրենք կանանց և երեխաներին ձեռք չեն տա: Մեծ մասը հավատում է ու ենթարկվում պայմանին, գյուղը մնում է անպաշտպան<sup>1</sup>: Ըստ Գեղամ Պետրոսյանի (ծնվ. 1912 թ., Սարիար) վկայության՝ Թաքնալիի (այժմ Գոգհովիտ Շիրակի մարզում) բնակչությունը կարծում էր, որ թուրքերն առաջին հերթին կկոտորեն երիտասարդներին, դրա համար վերջիններս, նրանց թվում և իր հայրը, հեռանում են գյուղից դեպի Համամլուի (այժմ Սպիտակ Լոռու մարզում) կողմերը<sup>2</sup>: Գյուղերը նախապես լքող տղամարդկանց դեպք արձանագրվում է նաև Փոքր Քափանակ գյուղում. Կարապետ Փիլոյանը տղամարդկանց հետ հեռանում է Ղարաքիլիսա՝ անցնելով լեռնային ճանապարհներով: Հեռացող տղամարդիկ իրենց հետ տանում են նաև ընտանեկան ոսկեղենը: Կանայք, երեխաները և ծերերը մնում են անպաշտպան<sup>3</sup>:

Ջարդի ձորը թեև միակը չէր, սակայն զանգվածային կոտորածների առումով ամենախոշորն էր: Մարդկանց կոտորելու համար ձորեր են օգտագործվել Շիրակի նահանգի տարբեր բնակավայրերում: Փամբակի տարածքի՝ Ղարաբոյայի ձորում եռօրյա դաժան կոտորածներ են տեղի ունեցել խաղաղ բնակչության նկատմամբ, այնուհետև փաշայի հրամանով դադարեցվել են<sup>4</sup>: Այստեղ նահատակվել է նաև Հաջի Նազար գյուղի բնակիչների մի մասը, որոնք փախել էին թուրքական հետապնդումներից և լեռներով իջել Ղարաբոյա<sup>5</sup>: Կոտորածների վայրերից էր նաև Արփաչայը. սպանությունները մեծամասամբ կատարում էին զիշերը և դիակները նետում գետը<sup>6</sup>:

Ըստ Վրացական ԽՍՀ Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարին ուղղված կապի աշխատակից Կոստանոշվիլու՝ 1921 թ. մայիսի 13-ի հայտագրի՝ թուրքերի ծրագրած և իրականացրած գործողությունների նպատակը մի ամբողջ ժողովրդի ոչնչացումն էր<sup>7</sup>: Շատերի դիերը թուրքերի հեռանալուց հետո են միայն հայտնաբերվել ջրհորներից, փոսերից, ձորերից, ավերված

---

<sup>1</sup> Բանասաց՝ Ազատ Մահակյան (ծնվ. 1935 թ., Ղալթախչի), պատմությունը լսել է հորից՝ ականատես Մեխակ Մահակյանից (ծնվ. 1877 թ., Ղալթախչի):

<sup>2</sup> Տե՛ս ՀՅԹԻ, Թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆ. հ. 258, էջ 14: Հուշագրություն «Ինչ որ հիշում եմ»:

<sup>3</sup> Բանասաց՝ Վանիկ Ոսկանյան (ծնվ. 1965 թ., Հովիտ), պատմությունը լսել է պապից:

<sup>4</sup> Տե՛ս ՀՅԹԻ, Թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆ. հ. 42:

<sup>5</sup> Բանասաց՝ Անդրանիկ Շահինյան:

<sup>6</sup> Տե՛ս **Աբրահամյան Հ.**, Ալեքսանդրապոլի իրադարձությունների շուրջ (1920 թ. նոյեմբեր-1921 թ. ապրիլ) // «ԼՀԳ», 2007, թիվ 2, էջ 127:

<sup>7</sup> ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 169, թ. 13:

տներից, գետերից և դաշտերից<sup>1</sup>: Ալեքսանդրապոլի գավառում, ըստ տեղական իշխանությունների հանձնաժողովի տվյալների, քեմալականների կողմից սպանվել են 30.000 տղամարդիկ, վիրավորվել՝ 20.000-ը, գերեվարվել 18.000-ը, կախաղան են բարձրացվել 25-ը և սովից մահացել՝ 10.000-ը<sup>2</sup>:

### Սպանություններ և բռնություններ կանանց և երեխաների նկատմամբ

Թուրքական բանակը գրավված վայրերում անպաշտպան բնակչության նկատմամբ իրականացնում էր անմարդկային արարքներ, որոնք ուղեկցվում էին դաժան սպանություններով: Կանայք և երեխաները դառնում էին հրեշավոր գործողությունների զոհեր: Զինադադարի կնքումից հետո թեև զանգվածային կոտորածներն ավարտվում են, սակայն բռնություններն ու մասնակի սպանությունները շարունակվում են: Կանանց ու երեխաների զանգվածային սպանությունների խոշոր վայրը Ջարդի ձորն էր, որը դարձել էր ռազմակալված Շիրակի նահանգի մի մասի՝ Փամբակի հովտի և Շիրակի դաշտի ազգաբնակչության սպանդի հիմնական վայրը: Ջաջուռի և Ադրուլադի շրջաններում 1921 թ. կատարված լուսանկարները փաստում են երեխաների դաժան սպանությունների մասին: Փոքր տարիքի երեխաները մորթված ու կիտված են միմյանց վրա<sup>3</sup>: Սպանվածներին դաժան բռնությունների ենթարկելու մասին է վկայում նաև լուսանկարներում տեսանելի՝ զոհերին պարաններով կապած լինելու իրողությունը<sup>4</sup>: Այս ամենը թուրքերն իրականացրել էին նաև ոչ վաղ անցյալում Դեր-Ջորի ոստիկանապետ Մուստաֆա Միդկիի հրամանով 1916 թ. հոկտեմբերի 24-ին 2000 հայ որբերի ձեռքերն ու նոտքերը կապել էին ու նետել Եփրատ գետը<sup>5</sup>:

Հղի կանանց բացված որովայնները<sup>6</sup> բացահայտում են մարդասպանների վայրենաբարո վարքը:

Հաջի Նազարում մարդկանց առանձնացրել են տարբեր շինություններում: Երեխաներին հավաքում էին և լցնում մարագները, որ այրեն: Գյուղում ապաստանած մշեցի պատկառելի մի ծերունի (Գալո բիձեն) գիշերը կարողանում է նրանց մի մասին փրկել, կանգնեցնում է գոմեշի վրա և դուրս հանում երդիկից<sup>7</sup>: 1920 թ. նոյեմբերի 27-ին Ալեքսանդրապոլի գավառի առա-

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 169, թ. 13:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Տե՛ս ՀԱԱ Կինոֆոտոֆոնո փաստաթղթերի մասնաճյուղ: Պոզիտիվ լուսանկարների ֆոնդ: Լուսանկարներ՝ p-233, p-236, p-237, p-239, p-240, p-241. Ադրուլադ և Ջաջուռ գյուղերի սպանված երեխաները:

<sup>4</sup> Նույն տեղում: Տե՛ս լուսանկար p-240:

<sup>5</sup> Տե՛ս **Dadrian V.**, Children as Victims of Genocide: The Armenian Case // Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր: Գիտական աշխատություններ, 7, Երևան, 2003, էջ 9:

<sup>6</sup> ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 134:

<sup>7</sup> Բանասաց՝ Անդրանիկ Շահինյան:

ջին գավառամասի կոմիսարի օգնականի զեկույցից՝ ուղղված գավառային կոմիսարին, տեղեկանում ենք, որ մեկ տան մեջ հավաքված են եղել հասակավոր կանայք, մեկ այլ տան մեջ՝ երիտասարդ հարսներ, իսկ մեկ այլ օրիորդներ: Իսկ մեկ այլ տան մեջ հավաքել էին տղա երեխաներին՝ ութ տարեկանից մինչև 15 տարեկան: Հասակավոր կանայք ու տղաները սովից մեռնում էին: Իսկ սարսափելին՝ սկսած 10 տարեկանից բռնաբարում էին օրիորդներին, նույնիսկ բուլոբին<sup>1</sup>:

Թուրքերը Հաջի Նազար գյուղից այնքան շատ են հարստություն ձեռք բերում, որ բեյը (բեկ) գյուղն անվանում է «Քուչուկ Ստամբուլ»<sup>2</sup>: Հետաքրքրական է կոտորածի, թալանի և կողոպուտի ենթարկված Ղալթախչի գյուղը (Փամբակի տարածքում) ևս թուրքերն այդպես են անվանակոչել<sup>3</sup>: Այստեղից հետևություն. այն բնակավայրերը, որտեղ թուրքերը շատ հարստություն էին ձեռք բերում, անվանում էին «Փոքր Ստամբուլ»՝ իրենց հրճվանքն ու ցնծությունը արտահայտելով այս կերպ:

Թուրքական բանակում «այլասերումը մեծ չափեր» էր ընդունել: Թուրքերն ամենուր իրենց պահում էին անասելիորեն սանձարձակ<sup>4</sup>: Թուրքական կարճատև տիրապետության ընթացքում Ալեքսանդրապոլի գավառը հայաթափվում էր ու ամայանում: Արդեն 1921 թ. հունվարի 14-ին այդ սհասարսուռ օրերի մասին վկայում է Ալեքսանդրապոլի հեղկումի անդամ Նահապետը՝ տարակուսելով, որ կարելի է ասել «գավառ չունենք», 75.000 բնակչությունից հազիվ մնացել է 15.000-ը<sup>5</sup>: Ըստ Կոստանոշվիլու՝ Վրացական ԽՍՀ Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարին ուղարկած 1921 թ. մայիսի 13-ի հայտագրի, որտեղ ներկայացվում են տեղական իշխանությունների կողմից կազմված հանձնաժողովի մոտավոր հաշվումները, ռազմակալված Ալեքսանդրապոլի գավառում քեմալականների կողմից սպանված երեխաների թիվը հասնում էր 5000-ի, վիրավորներինը՝ 3000-ի, սովամահներինը՝ 10.000-ի<sup>6</sup>: Սարսափելի էին կատարված բռնաբարքները և հանցավոր գործողություններն աղջիկների նկատմամբ: Քեմալականների կողմից սպանվել էին 10.000 աղջիկներ, վիրավորվել 5000-ը, բռնաբարվել 10.000-ը, գերի էին տարվել 3000-ը և սովից մահացել 1000-ը<sup>7</sup>: Առանձին ներկայացվում է նաև կանանց նկատմամբ կատարված գործողությունների արդյունքը՝

---

<sup>1</sup> Տե՛ս **Ալեքսանյան Կ.**, Ալեքսանդրապոլի գավառը թուրքական ռազմակալման ժամանակաշրջանում, էջ 127:

<sup>2</sup> Բանասաց Վարդանուշ Աղաբեկի Խաչատրյան (ծնվ. 1930 թ., Հաջի Նազար), պատմությունները լսել է մորից՝ ականատես Վավիկ Ավետիսյանից (ծնվ. 1895 թ., Դիրաքլար):

<sup>3</sup> Բանասացներ՝ Միշա Մինասյան (ծնվ. 1928 թ., Ղալթախչի): Ազնիվ Աֆրիկյան (ծնվ. 1946 թ., Հարթագյուղ): Լոռու մարզ, Հարթագյուղ, կուլեկտիվ հիշողություն:

<sup>4</sup> **Աբրահամյան Հ.**, նշվ. աշխ., էջ 127:

<sup>5</sup> ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 43, թ. 7:

<sup>6</sup> Նույն տեղում, գ. 169, թ. 14:

<sup>7</sup> Նույն տեղում:

սպանվել էին 15.000-ը, վիրավորվել՝ 10.000-ը, բռնաբարվել՝ 25.000-ը, առևանգվել՝ 2000-ը և սովից մահացել 5000-ը<sup>1</sup>: Այս թվերը լրացնում են վերապրածների հիշողությունները՝ ցույց տալով կատարված ոճրի հետևանքները մարդկային կորուստների տեսքով:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարող ենք փաստել, որ թուրքական բանակի կատարած զանգվածային կոտորածներն Ալեքսանդրապոլի գավառում ցեղասպանական գործողություններ էին: Թուրքերը նպատակ ունեին ոչնչացնել գրավյալ տարածքների հայ բնակչությանը, տիրանալ նրա հայրենիքին և ունեցվածքին: Այդ ամենն ուղեկցվում էր մարդկանց ֆիզիկապես ոչնչացնելու և հոգեկան խեղումներ պատճառելու միջոցով, որոնք համապատասխանում են ՄԱԿ-ի «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին կոնվենցիայի» ցեղասպանության հանցագործության հանցակազմի հատկանիշներին: Կարող ենք արձանագրել, որ թուրքական բանակի կողմից 1920-1921 թթ. Ալեքսանդրապոլի գավառում հայ բնակչության զանգվածային կոտորածները, ըստ էության, Հայոց ցեղասպանության շարունակվածությունն էր այս անգամ Արևելյան Հայաստանում:

#### **Վազգեն Հախոյան – Քեմալականների իրականացրած զանգվածային կոտորածներն Ալեքսանդրապոլի գավառում (1920-1921 թթ.)**

Հողվածում ներկայացվում են Ալեքսանդրապոլի գավառի տարածքում քեմալականների 1920-1921 թթ. ցեղասպան քաղաքականության դրսևորումները. այն հիմնված է ականատես-վերապրողների և նրանց սերունդների հիշողությունների վերլուծության վրա: Բանավոր նյութերը ձեռք են բերվել ազգագրական և բանահավաքչական դաշտային հետազոտությունների ու դիտարկումների արդյունքում, օգտագործվել են արխիվային նյութեր, ժամանակի մամուլ, մասնագիտական գրականություն: Ուսումնասիրվել են նաև թեմային վերաբերող Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ֆոնդերում պահվող ականատես-վերապրածների հուշագրությունները: Անդրադարձ է արվել հայ խաղաղ բնակչության նկատմամբ քեմալականների ցեղասպան գործողությունների ընթացքին, կոտորածների կազմակերպման ձևերին և հատկապես նրանց հետապնդած նպատակներին: Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման, Հայկական հարցի լուծման՝ արդի փուլում ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է Հայոց ցեղասպանության շարունակականությունը Արևելյան Հայաստանում մատնանշելու հանգամանքով: Սա հեղինակի իրականացրած բանահավաքչական աշխատանքների շարունակությունն է, այս անգամ Շիրակի դաշտում: Թուրքական սոսկալի կոտորածներ են իրականացվել Փամբակի լեռնաշխարհի լանջերին տեղակայված գյուղերում՝ մի կողմից Շիրակի դաշտում, մյուս կողմից Փամբակի հովտում: Համեմատական վերլուծության են ենթարկվել թուրքական բանակի գործողությունները՝ Ղարաբաղի հայի և Ալեքսանդրապոլի գավառներում:

---

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 169, թ. 14:

**Вазген Ахоян – Массовые погромы, осуществленные кемалистами в  
Александропольском уезде (1920-1921 гг.)**

*Ключевые слова – Ширакская область, Александрополь, Памбак, Карс, резня, холокост, Геноцид армян, кемалисты, очевидец, выживший, свидетельства, воспоминания, сопротивление*

В статье представлены проявления геноцидальной политики кемалистов 1920-1921 годов на территории Александропольской губернии: она основана на анализе воспоминаний выживших очевидцев и их поколений. Устные материалы получены в результате этнографических и фольклорных полевых исследований и наблюдений; использованы архивные материалы, пресса того времени, специальная литература. Также были изучены тематические воспоминания выживших очевидцев, хранящиеся в фондах музея-института Геноцида армян. В статье упоминается о геноцидальных действиях кемалистов против армянского гражданского населения, о средствах организации массовых убийств, особенно о преследуемых ими целях. Актуальность исследования о признании и осуждении Геноцида армян на нынешнем этапе урегулирования армянского вопроса обусловлена тем, что в Восточной Армении наблюдается продолжение проведения Геноцида армян. Это продолжение сделанной нами фольклорной работы, на этот раз о резне на Ширакской равнине. Страшные турецкие погромы были совершены в деревнях, расположенных на хребтах Памбак, с одной стороны, на равнине Ширак, а с другой – в долине Памбак. Автор попытался провести сравнительный анализ действий турецкой армии в провинциях Каракилиса и Александрополе.

**Vazgen Hakhoyan – Massacres Executed by the Kemalists in Aleksandrapol  
Province (1920-1921)**

*Key Words – Shirak region, Alexandrapol, Pambak, Kars, massacre, annihilation, Armenian Genocide, kemalists, eyewitness, survivor, testimonies, memories, resistance*

The article addresses the manifestations of genocidal policies by the Kemalists in the territory of Alexandrapol province during 1920-1921. It is based on the analysis of the accounts of eyewitness-survivors and their generations. The oral materials were obtained as a result of ethnographic and folkloric field research and observations, as well as archival materials, press materials pertaining those years and professional literature. Relevant memoirs of the eyewitness-survivors retained by the Armenian Genocide Museum-Institute were also studied. References are made to the genocidal actions of the Kemalists against the Armenian civilian population, the forms of massacre execution, and, especially, the goals they pursued. The relevance of the study at the current stage of the recognition and condemnation of the Armenian Genocide, and the resolution of the Armenian Question is that it points out to the continuation of the Armenian Genocide in the Eastern Armenia. This is the continuation of our ethnographic study, this time in the Shirak plain. Horrendous Turkish massacres were executed in the villages located on the slopes of the Pambak mountain range – both in the Shirak plain and the Pambak valley. We have made a comparative analysis of the actions of the Turkish army in the provinces of Gharakilisa and Alexandrapol.

**Վազգեն Հախոյան – Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ասպի-  
րանտ (van.karno@gmail.com)**

Ներկայացվել է 17.08.2021

Գրախոսվել է 30.09.2021

Ընդունվել է տպագրության 30.11.2021